



Զահրատ

Նինա

Մեծ հորաքրոջս յիշատակին

Ութսուն տարու էր ան
երբ այս երգը կ'երգէր
Ու մենք միշտ պատրաստ էինք ծաղրելու
Կը ծիծաղէինք

Միշտ պատրաստ էինք ամէն բան մերժելու
դեռ ոչ մէկ յիշատակ ունէինք պատմելիք
թէ յիշատակներն որքան կը յուզեն
չէինք գիտեր

Մինչդեռ ութսուն տարու էր ան երբ կ'երգէր
Ձայնին մէջ երգին մէջ աճապարանքը կար
երթալու դէպի ետ
ուր ինք մանկամարդ աղջիկ տակաւին
լոյս օրեր ապրելու տենչն աչքերուն մէջ
մանտոլինին վրայ մատնահարելէն
կ'երգէր իր մուտքը կեանքի սեմէն ներս
Այս այն տարիքն էր ուր շրթներ կը դողդղան
կը սիրեմ ըսելու անորոշ վախէն
ուր ամէն աղջիկ հայրն ու մայրը մոռցած
պատրաստ է մեկնելու խոստումի մ'ետեւէն

Իսկ մենք ուրախ էինք ամեն երգ ծաղրելով
Երբ ութսուն տարու էր ու կ'երգէր մեղմօրէն
դեռ ոչ մէկ անցեալ ունէինք յիշելիք
թէ ետ չեն դառնար օրերն երբ երթան
չէինք գիտեր

Տարիներ հարկ եղաւ որ անցնին արագ
Որ երբ այդ երգն այսօր դիպուածաւ լսեմ
Աչքերս բոլորէն անգին դարձուցած
արտասուեմ գաղտնօրէն բոլոր անոնց համար
որոնց կեանքն անցաւ կարօտովն այն երգին
չկրցան երգել